

5335

ՍԵՐԻԿ

*Համբարձում*



**ՀԱՄԱՀԱՆԻ**

*Մրայուն*

ՅԵԼԵՆՈՎԿԱ

ԱՌՏԱ

ԹԱՁԱ ԳՅՈՒՂ

ՋԵՐԵՎԱՆ



Ն.ԲԱՅԱՋԵՏ

ՀԱՄԱՐԼՈՒ

891-996

7-23

ՎԵՂԻ

ՄԱՐՏՈՒՆ

## ԱՂՄԱՂԱՆԻ ՎՐԱՅՈՎ

Մի խումբ սահմանապահ կարմիր բանակայիններ  
յեկել եյին պիոներական աղումբը:

Յերեխաները նրանց շրջապատել ու զրուցում եյին:

Յերեխասարգ սահմանապահ, հայտնի ֆիզկուլ-  
տուրնիկ Բասուր մոտեցավ յերեխաներին և ասաց.

— Յեկեք ձեզ մի դեպք պատմեմ, յեկեք այստեղ:  
Այ, սա Հայաստանի քարտեզն է, մոտեցեք. գտեք Յե-  
րեվանը:

Յերեխաները վազեցին դեպի քարտեզը և իսկույն  
գտան Յերևանը:

— Լավ, ասաց ընկեր Բասուր, դե հիմա գտեք Մար-  
տունին, Սևանա լճի մոտ: Շատ լավ. դե հիմա ասա-  
ցեք, թե ի՞նչպես Յերևանից կգնաք Մարտունի:

— Սավառնակով, վրա բերեց Վաղոն:

— Կարելի չէ սավառնակով, ասաց ընկեր Բասուր,  
բայց յես ողային ճանապարհի մասին չեմ հարցնում:

— Յերևանից խճուղով կգնամ Սևան, այնտեղից  
Նոր-Բայազետ, հետո՝ Մարտունի: Յես ամառն այդ  
ճանապարհով Բասարգեշար եմ գնացել, ասաց Ռա-  
ֆիկը:

— Ճիշտ է, դա սովորական ճանապարհ է, ասաց  
ընկեր Բասուր, իսկ յես ուզում եմ պատմել մի անսո-  
վոր ճանապարհի մասին, այն ճանապարհի, վոր մենք  
անցանք 1934 թվի դեկտեմբերին:

— Պատմեցեք, պատմեցեք.

— Դե նստեցեք:

Յերեխաներն արագ տեղավորվեցին սեղանի շուրջը.





—1934 թվի ղեկավարներին շատ ցուրտ էր, —սկսեց Բաստը— լեռներում բուք էր: Յերեանի և մի շարք հեռավոր շրջանների միջև հեռագրական կապը կտրվել էր:

—Վոր շրջանների, հարցրեց Լուսիկը:

—Նոր-Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի, Փոստ-հեռագրական ժողկոմատին վոչ մի կերպ չէր հաշտվում վերականգնել կապը: Յեվ Մարտունուց, և՛ Յերեվանից բանվորներ եյին ուղարկել գիծը ստուգելու և վերանորոգելու:



Բանվորների յերկու խմբերն էլ վոչինչ չեյին կարողացել անել: Սոսկալի ցուրտ էր, ձյուն ու բուք: Վոչ վոք չէր կարողացել բարձրանալ լեռները: Կապի ժողկոմատը խնդրեց, վոր դահուկավոր սահմանապահները ոգնության գան: «Դինամո» ընկերությունն ուղարկեց մեզ, ինձ և իմ յերկու ընկերներին, վորոնք լավ դահուկավորներ եյին:


«ՅԵՐԵՎԱՆԻ ՅԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԸ ՊԵՏԻ ԵՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ»:

Ահա այս էր հրամանը:

Այդ ճանապարհը մեզ անձանոթ էր: Բայց մենք բանակայիններ ենք և յերբ հրաման ենք ստանում, կյաւքը գնով ել լինի, պետք ե կատարենք:

Բացի մեր զինվորական հագուստներից, վերցրինք մուշտակներ ու տաք կոշիկներ: Ունեյինք հրացան, ատրճանակ, հեռագիտակ, դաշտային հեռախոս, կացին,





յերկաթե ճանկեր, յերկաթալար և  
գործիքներ:

Հետներս ունեյինք յերեք որվա  
պաշար՝ հաց, պանիր, կարագ, կոնսեր-  
վաներ: Մի խոսքով մեզնից յուրաքան-  
չյուրի բեր 16 կիլո յեր:

Նախ քան Յերևանից դուրս գալը,  
մենք լավ ուսումնասիրեցինք քար-  
տեղով այն անձանոթ ճանապարհը,  
վորով պետք է գնայինք:

Այդ քարտեղը մոտս եմ պահում:


Այս ասելով, Բասուր ծոցի գրպա-  
նից հանեց ծալմած քարտեղը, բացեց  
ու փոեց յերեխաների առջև:

Այ Յերևանը... Այս ել Մարտունին: Մենք պետք  
է գնայինք այսպես, անցնեյինք Աղմաղանի լեռնա-  
շղթայի վրայով:

Դեկտեմբերի 20-ին կառ-  
քով գնացինք Բաշգյառնի:  
Այդ ճանապարհին ձյուն չը-  
կար: Այդտեղ ել գիշերեցինք:

Մյուս որը, դեկտեմբերի  
21-ին, առավոտյան ժամը  
6-ին, դահուկներով սկսեցինք  
բարձրանալ դեպի սարը:

Ճանապարհն անհարմար  
էր. ձյունը հավասար չերտով  
չեր նստած, ձյան տակից հա-



ճախ ցցվում էյին քարեր ու դժվարացնում մեր ճա-  
նապարհը:

Այսպես հասանք Թաղաքենդ գյուղը: Այստեղ  
պատմեցինք, թե ովքեր ենք և ուր ենք գնում:

Գյուղացիք շատ զարմացան, յերբ իմացան, վոր մենք լեռների վրայով պետք է անցնենք և գնանք Մարտունի: Կասկածոտ շարժում էյին գլուխները:

— Տարվա այս յեղանակին, այդ լեռների վրայով անցնել չեք կարող, ասում էյին նրանք:

Մենք, առանց տատանվելու, շարունակեցինք մեր ճանապարհը: Ինչ գնով ել լիներ, պետք է լուծեյինք մեզ առաջադրած խնդիրը:

Քանի գնում, այնքան ավելի դժվարանում եր ճանապարհը. դժվար եր բարձրանալ:

Իաշտավայրում ձմեռը հեշտ է դահուկներով կըսերել— անցնել, իսկ լեռներով՝ դժվար: Լեռան լանջերին ձյունը հավասար չե փռված. մի տեղ շատ է, մի տեղ քիչ: Ձորեր կան, փոսեր, խորխորատներ. փտանգավոր է: Յեթե սայթաքես ու ընկնես ձորը, գուցե չկարողանաս այլևս դուրս գալ:

Լեռներում պետք է շատ զգույշ լինել:

Անվերջ բարձրանում ենք վեր, հոգնում ենք, դժվար է շնչել:

Մեր քարտեզի վրա, ա՛յ այստեղ, նշանակված եր «Խորհրդային տնտեսություն»: Ուզում էյինք շուտ հասնել այնտեղ, հանգստանալ ու շարունակել ճանապարհը: Բարձրանում ենք, հա բարձրանում, այս կողմը նայում, այն կողմը՝ վոչ մի տնտեսություն, վոչ մի շենք, վոչ մի մարդ չի յերևում:

Ամեն տեղ ձյուն է, սպիտակ, աչք ծակող մաքուր ձյուն:

Շատ վորոնելուց հետո, վերջապես, գտանք ձյունածածկ մի տնակ, ավելի շուտ մի քարակույտ, ուր ամառը փոխարենն են գիշերում:

Ի՞նչ անենք. ժամը տասն է: Քաղցած ենք, հոգնած: Բարձրացել ենք մոտ 45 աստիճան թեքություն ունեցող բարձրունք:

Ձյունը հետ տվինք, մտանք այդ տնակը, ցրտից

մի քիչ պաշտպանվելու և նախաճաշելու համար:

Մի անկյունում փայտ ել նկատեցինք, սակայն կըրակ չարինք, վորովհետև շտապում էյինք: Կերանք սառը նախաճաշ, մի քիչ շունչ քաշեցինք ու տնակից փայտ վերցնելով, շարունակեցինք մեր ճանապարհը:

Ելի բարձրանում ենք վեր, վեր ու վեր:

Քանի գնում, այնքան ավելի ու ավելի ծանր է շնչել:

Ժամը 17 և 50 րոպեյին հասանք 3570 մետր բարձրության:

Ահա և № 112 հեռագրասյունը:

Այդտեղից պետք է սկսվեր ավելի դժվար ճանապարհը:

Մինչ լեռան գագաթը մնացել եր ընդամենը մեկ կիլոմետր:

Ո՛ր, վորքան պատեցինք մենք այդ մեկ կիլոմետրի վրա: Ամեն մի մետր տարածությունն անցնում էյինք կատաղի պայքարով: Գնում էյինք առաջ, հանկարծ սահում, հետ ընկնում: Կարծես վերևից մեկը մեզ հըրում եր, արգելում առաջ գնալ: Մի քանի մետր բարձրանում ենք, նայում առաջ, սարի գագաթը չի յերեվում: Խիտ ամպերն ու թանձր մառախուղը ծածկել են գագաթը: Կտրել, պոկել, թագցրել են գագաթը, հեռացրել մեզնից: Մառախուղը խանգարում է մեզ ճիշտ ուղղություն գտնել, դժվարությամբ գնում ենք առաջ: Ելի նայում վեր, գագաթը չի յերևում: Մտածում ենք. «արդյոք վերջ կլինի՞ այս սարին»:

Այսպես պայքարելով մեկ կիլոմետրն անցանք 4 ժամում:

Յերբ ամպերը ձեղքելով անցանք, հասանք գագաթին, փայլեց արևը: Հետ նայեցինք. ամպերը մնացին ներքևում՝ մեր վոտքերի տակ:

Ամպերը խիտ, փափուկ քուլաներով ծածկել էյին մեր անցած ուղին, լեռները, ձորերը: Ներքևում ցուրտ

եր, իսկ այստեղ, լեռան գագաթին, արևի փայլուն շողերը այրում էյին մեզ:

Վերևում ձյունոտ լեռնաշղթաներն էյին տարածված միմիանց հետևից: Ներքևում ամպերի լուռ ծովեր:

Այդ գագաթից Արարատը շատ ցածր և մոտ էր թվում մեզ, այնքան մոտ, վոր թվում էր, թե մի քիչ գնաս, իսկույն կհասնես նրան:

Գեղեցիկ էյին լեռները, բայց դիտելու ժամանակ չունեյինք:



Մեր ուժերը հասնելու վրա էյին:

Հետներս վերցրած փայտը պետք չեկավ: Իսկույն խարույճ վառեցինք, մեր թրջված շորերը չորացրինք, կոնսերվաները տաքացրինք, կերանք—կշտացանք:

Յերկար չտևեց արևի ջերմությունը, արևը թագնրվեց, սկսեց փչել սառը քամին:

Սառնամանիքը մոտենում էր: Սարերի ցուրտը պատում էր մեզ, ծակծկում:

Մնալը վտանգավոր էր:

Շարժվեցինք առաջ, ելի վեր՝ դեպի հեռագրասյուները:

Գիշեր էր:

Քամին էր միալար աղմկում մեր շուրջը:

Սառը ողբ ճեղքելով, կուրծքներս դեմ տված սառնամանիքին՝ սահում ենք լարված դեպի առաջ:

Վրսզզ, վրսզզ—դահուկներն են սեղմում լեռների ձյունը:

Դոփ-դոփ—մեր հենարան փայտերն են ծակծկում ձյան սավանդ:

Մեր ծանր շնչառությունը ճեղքում է սարերի քամուն.—եկ ուրիշ ձայն չկա:

Մեր շնչից թրջվել ու սառել են մեր մուշտակների յեզրերը:

Հոնքերից, արտևանունքներից սառույցի ձողիկներ են կախվել:

Սառնամանիք է:

Ժամը 24-ին, վերջապես, մենք մեծ դժվարությամբ գտանք № 193 ստուգիչ հեռագրասյունը: Ստուգեցինք:

—Այս է, այստեղ է փչացած.—գոչեց ընկերս:

Այդ սյունի մեջ, այդտեղ էր ընդհատվել կապը:

Մեզանից մեկը բարձրացավ սյունը: Քամին ուզում էր նրան պոկել, բայց նա խրում էր յերկաթե ճանկերը սյունի մեջ ու համառ կերպով պայքարելով քամու հետ, բարձրանում վերև:

Վերանորոգեցինք, ուղղեցինք վնասվածը և անմիջապես հեռախոսով կապվեցինք Յերևանի հետ:

Ուրախացած հայտնեցինք, վոր գտել ենք վնասված սյունը և ուղղել:

Գիշերվա կեսին, լեռան գագաթից հեռախոսագրեր ուղարկեցինք Կապի ժողկոմին և մեր պետին: Հայտ-



նեցինք, վոր կապը վերականգնել ենք և այժմ պետք է գնանք Մարտունի:

— Կեցցեն մեր կարմիր մարտիկները,

— Կեցցեն մեր անվախ ֆիզկուլտուրնիկները:


Լսում ենք Յերևանից և Վոգևորությունից մոռանում մեր անցած ճանապարհի դժվարությունները:

Հեռավոր սարի վրա մեզ ծանոթ ձայներ ենք լսում, մենակ չենք:

Նորից ուժ ենք զգում առաջ գնալու:

Մինչ մենք յերկուսով ուղղում ենք սյան փնափած լարերը, մեր ընկերը գնում է ճանապարհը հեղացողներու:

Վերանորոգումից հետո շտապեցինք նրա հետևից:



— Գիշեր եր, հարցրեց պիոներ Վադոն:

— Այո:

— Բա ի՞նչպես գնացիք նրա հետևից:

— Շատ հեշտ, ասաց ընկեր Բաստոր, ժպտալով, դադահուկների հետքով: Սրել եյինք մեր տեսությունը և մաքուր ձյան վրա հեշտությամբ տեսնում եյինք դահուկների թողած զուգահեռ գծերը:

Շատ շուտ հասանք մեր ընկերոջը ու արագացրինք մեր քայլերը:

Աղմաղանի լեռնաշղթան շատ լեռներ ունի, լեռների ծալքեր, ձորեր, ելի լեռներ, ելի ձորեր: Պետք է բարձրանալ, իջնել, կրկին բարձրանալ, նորից իջնել:

Մի մեծ թեքվածքով իջանք ձորը, պայքարելով բարձրացանք վերև, կրկին թեք լանջով սահեցինք:

Հանկարծ ձյան հաստ շերտը քարերի հետ մեր հետեվից պոկվեց և աղմուկով ընկավ ցած: Դղրդոցը ձորերում արձագանքով մի քանի անգամ կրկնվեց, իսկ մենք արդեն այդ ձյան վրայից սահել—թռել ելինք: Հետ նայեցինք. վայ մեզ, յեթե մի փոքր ուշանայինք,



այդ քարերի՝ ու ձյունի տակ պիտի մնայինք... Ել դուրս գալ չեյինք կարող:

Ելի բարձրացանք: Ամեն մի բարձրունք կտրելը մեզանից մեծ ուժ եր պահանջում:

Յերկրորդ որն եր ճանապարհ եյինք գնում առանց հանգստանալու:

Վերջին ճիգերն եյինք գործ դնում: Դահուկների վրա համարյա թե քնում եյինք:



—Ի՞նչպես, կանգնած քնում,—զարմացավ Ռաֆիկը:

—Վոչ, կանգնած չեյինք, սահում եյինք ու համարյա քնում փոտի վրա: Աշխատում եյինք չքնել, արթնացնում եյինք քնածին... Թե չե կարող եյինք սառչել...

Վերջին բարձրունքի կեսին եյինք հասել:

Դեկտեմբերի 22-ի առավոտյան ժամը 4-ն եր:

Ել ուժ չկար, առաջ գնալ չեյինք կարողանում, հոգնածությունից ընկնում եյինք: Նայեցինք քարտեզին, այնտեղ տնակ եր նշանակած, բայց տնակը չկար:

—Մնանք ձյան մեջ, հանգստանանք, ել չեմ կարողանում,—ասաց Անդրեյը:

—Մնանք... համաձայնվեցինք մենք:

—Ի՞նչպես, ձյան մեջ մնալ, հարցրեց Վիլենը:

—Ձյունը փորել ու մտնել մեջը քնել:

Բայց այնպես ցուրտ եր, ուղղակի կտրում եր: Յես տեսա, վոր դրությունը ծանր ե, բավական ե մտնել ձյան մեջ քնել, այլևս վեր չենք կենալու, կը սառչենք ու կմնանք:

—Մնալ չի կարելի, հրամայեցի, լարենք վերջին ուժերը, հասնենք Մարտունի:

Ուժասպառ ենք յեղել, բայց մեզ սպառնող չվտան-

զը մի կողմից և մյուս կողմից մի բնակավայր հաս-  
նելու մեծ ցանկությունը, լարեցին մեր ուժերը, քա-  
ջալերեցին մեզ և մենք ելի շարժվեցինք: Առաջ  
ենք գնում: Թուլացել ենք: Քիչ ե մնում ընկնենք:

Հանկարծ հեռվում ճրագներ յերևացին...

Այդ փոքրիկ փայլիկող լույսերը մեզ նոր ուժ ու  
յեռանդ ներշնչեցին: Հոգնածությունը փախավ: Արագ  
սլանում ենք. ուղղակի թռչում:

—Թըրըմբ—հանկարծ գլորվեցի ձյունի մեջ. ձյու-  
նը շարժվեց—ընկավ, ինձ ել տանելով իր հետ ցած:

Աչքերս մթնեցին, վոտքս ցավում եր, ընկա, պառ-  
կել եմ, խրվել ձյան մեջ: Վրաս, յերեսիս ձյուն ե,  
խոսել չեմ կարողանում, շնչել չեմ կարողանում:

Զգում եմ ինչպես սառչում են ձեռներս ու վոտ-  
ներս...

Ընկերներս հասան, զգուշությամբ փորեցին ձյու-  
նը, ինձ հանեցին: Մի կերպ վոտքի կանգնեցրին, թափ  
տվին ձյունը վրայիցս ու ելի առաջ ընթացանք: Ուշ-  
քի յեկա: Այդտեղ հաճախ եյինք ընկնում, ձյունը շառ-  
շատեր, այնքան շատ, վոր յերբ դուրս եյինք թռչում  
դահուկի վրայից, մինչև կոկորդներս խրվում եյինք  
ձյան մեջ: Ընկնում ենք, վեր կենում, գլորվում, ելի  
կպչում դահուկներին: Աչքի լույսի պես եյինք պահ-  
պանում մեր դահուկները: Յեթե կորցնեյինք, կամ  
կոտրտեյինք—կորած եյինք, ել այդ սարերից, ձորերից  
չեյինք ազատվի. կխրվեյինք ձյան մեջ, կմնայինք ու  
կսառչեյինք: Այնքան խոր եր ձյունը, վոր քայլեր չե-  
յինք կարողանում, միմիայն դահուկներով կարելի յեր  
լինում անցներ:

Բարձրունքն անցանք: Իջնում ենք ցած:

Շտապում ենք, սահում ենք միմիանցից բավա-  
կանաչափ հեռու, վոր միմիանց չխանգարենք: Պայմա-  
նավորվել ենք լեռան ստորոտում միանալ և միասին  
առաջ գնալ:

Առաջինը յես իշա ցած: Սպասեցի, քսան ըոպեյից  
ընկերս հասավ:

Սպասում ենք միասին՝ յերրորդին:

Անցավ ելի քսան ըոպե՝ չկա՝ յերեսուն ըոպե՝ չկա,  
մեկ ժամ՝ դարձյալ չկա:



Անհանգստանում ենք:

«Սառել ե յերևի. ընկել ե մի տեղ, մնացել ե ձյան  
մեջ, գլորվել ե ձորը, վիրավորվել ե...» Ու նման դար-  
հուրելի կասկածներ մեկը մյուսին հաջորդելով, անց-  
նում են մեր մտքով:

Յուրա ե. քամին փչում ե. ջերմությունն իջել ե  
25 աստիճանի:

—Սպասիր,—ասացի ընկերոջս, յես գնամ ոգնու-  
թյան: Նայիր ժամացույցին, յեթե մեկ ժամից ավելի  
ուշանամ, կհետևես ինձ:

Հետ եմ գնում կրկին դեպի այն դաժան սարը  
ինձ համար նորից բարձրանալը շատ դժվար ե թվում:  
Ուժերս սպառվել են: Բայց պետք ե հասնել ոգնու-  
թյան:



Գնում եմ: Անցա մեկ կիլոմետր, վոչ-վոք չկա, անցա յերկու կիլոմետր—հեռվում մի ինչ վոր բան սկին ե տալիս: Մպիտակ ձյան վրա այս սև բիծը ինձ այնպես ճնշեց ու անհանգստացրեց:

Միրտա ուժեղ բաբախում ե...

Նա յե...

Շտապում եմ. ինչպես եմ բարձրանում:

Ընկերս եր. գունատ, ուժասպառ, համարյա ուշաթափ վիճակում: Արդեն սկսել եր սառչել:

Խոսել չեր կարողանում:

Անմիջապես վրայից վերցրի իրերը: Շփեցի ձեռքերը, յերեսը, շարժեցի վոտքերը, բարձրացրի, մի կերպ ամրացրի դահուկների վրա, վերցրի բուքսիլի և զգուշությամբ սկսեցի իջնել:

—Անդրեյ, պինդ կաց, ասում եմ նրան, հիշիր Ձեկյուսկինցիներին. խոսիր: Հիմա կհասնենք գյուղ:

Իջնում ենք:

Իսկ լույսերը քանի գնում հեռանում են ու հեռանում...

Լեռներում շատ դժվար ե տարածությունը վորոշել, թվում ե, թե այ, այն սարը, ձորն այնքան մոտ են, վոր իսկույն կհասնես, բայց գնում ես, գնում ու չես հասնում: Կարծես այդ մոտ յերեացող սարը փախչում ե քեզանից, իսկ քո առջև նոր բլուրներ են բարձրանում, նոր ձորեր բացվում:

Յերեքով գնում ենք:

Վերջապես ժամը 10-ին, լարելով մեր վերջին ուժերի մնացորդները՝ հասանք Թաղագյուղ:

Կոլտնտեսականները զարմացած մեզ շրջապատեցին: Նրանք չեյին հավատում, վոր մենք յեկել ենք Յերվանից՝ անցնելով Աղմ աղանի լեռնաշղթան:

—Այդպիսի բան յերբեք չի յեղել:

—Ձմեռը վոչ վոք սարը չի անցել,—ասում եյին նրանք:

Մեզ տարան տուն, տաքացրին ու լավ հյուրասիրեցին:

Նրանք շոշափում եյին մեր դահուկները, շոյում ձեռքով—այ լավ բան:

Մի կոլտնտեսականի կանգնեցրի դահուկների վրա, փայտերը տվի ձեռք:

—Դե, գնա:

Մի քանի քայլ սահեց ու վոտները գնացին առաջ, իրանը պահել չկարողացավ և թրմփաց:

Բոլորը ծիծաղեցին:

Վոր վարժվեք, ղդուք ել կարող եք մեզ նման ձմեռը ձյան վրայով սարեր անցնել:

Ուշքի յեկանք:

Շատ եյինք հոգնած. իհարկե կուզեյինք հանգրտանալ, բայց հրամանը մինչև վերջ չեյինք կատարել—Մարտունի չեյինք հասել:



Վեր կացանք, բաժանվեցինք կոլտնտեսականներին  
և ուղեվորվեցինք դեպի Մարտունի:

Ո՛ւռա, տովարիշչի,—գոռում եյին մեր հետևից:

Գեղեցիկ, արևոտ ուր եր:

Մեր առաջ կապտին եր տալիս Սևանա գեղեցիկ  
լիճը:

Հեռվում յերևում եյին լեռները, վորոնք իրանց  
ծանր ծալքերով գրկել, կաշկանդել եյին ժպտացող լճի  
ուրախ ջրերը:

Հեռվից հանգիստ եյին յերևում այդ լեռները, բայց  
մենք գիտեյինք, թե այդ հանգստության տակ ինչ  
վտանգներ կային:

Արևի շողերի տակ այնքան գեղեցիկ եր շրջապա-  
տը: Մենք մոռացության տալով մեր կրած տանջանք-  
ները, դիտելով բնությունը՝ հիանում եյինք:

Ողբ մաքուր եր, յերկինքը ջինջ կապույտ: Լճի  
ափից չեյինք ուզում հեռանալ:

Ափին շարված բազմաթիվ բաղերը կարծես մեզ  
նման հիացած դիտում եյին լիճը:

Իսկ լճի հայելու նման փայլուն ու վճիտ՝ ջրերում  
լողում եյին յերկու սպիտակ վայրի կարապներ:

—Կարապներ:

—Այո՛, իսկական սպիտակ, գեղեցիկ կարապներ:

Յերևի աշնանն իրենց յերամից հետ եյին ընկել,  
մնացել այգտեղ:

Նրանք այնպես սիրուն ու հանգիստ եյին լողում...

Յերկար դիտում եյինք:

—Կրակե՞նք. —ասաց Պյոտրը:

Կրակեցինք բաղերի վրա. բաղերն աղմուկով բարձ-  
րացան, մի քանի րոպե սև յերամբ ծածկեց յերկին-  
քը, թռան աղմուկով:

Կարապները հպարտ թեքեցին իրենց գեղեցիկ պա-

րանոցները և հանգարտ լողալով հեռացան դեպի լճի  
հեռավոր կողմը:

Առանց վորսի մտանք Մարտունի:

Մեզ սպասում եյին, նախորոք գիտենալով մեր գա-  
լըստյան մասին: Շատ լավ ընդունեցին: Այդտեղ հան-  
գրտացանք: Նոր զգացինք, թե ինչ վտանգներ ենք  
անցել, ինչ դժվարություններ հաղթահարել, կարծես  
յերազրից արթնանալով: Հեշտ չեր 29 ժամ, սառնամա-  
նիքին, դահուկներով անընդհատ գնալ լեռներով, ա-  
ռանց տաք սննդի, առանց ջրի:

—Ի՞նչպես, մի՞թե ճանապարհին ջուր չկար, հար-  
ցրեց Ռաֆիկը:

—Ձկար: Լեռնային աղբյուրները սառել եյին, կամ  
ձյունով ծածկվել, մեր ճանապարհին մեզ ջուր չպա-  
տահեց. մենք ել այնքան անհեռատես եյինք, վոր ջուր  
չեյինք վերցրել:

—Բա վոր ծարավում եյիք, ի՞նչ եյիք խմում,—  
զարմացած հարցրեց Կլարիկը:

—Ձյուն եյինք կուլ տալիս:

—Ճանապարհին գազանների չպատահեցի՞ք, հար-  
ցրեց Լուսիկը:

—Վոչ, վոչ մի կենդանու: Միայն յերկրորդ ուրը  
հեռվում մի աղվես տեսանք: Նա մեզ նայեց ու հան-  
գիստ անցավ, իսկ մենք այնքան հոգնած եյինք, վոր  
նրա վրա ուշք չդարձրինք:

Մարտունուց կապվեցինք Յերևանի հետ մեր ուղ-  
ղած հեռագրով:

Հետո յեկանք Նոր-Բայազետ, այ, այսպես, Նոր-  
Բայազետից—Սևան: Սևանից ել խճուղով ուղիղ Յե-  
րեվան:

Այդ ճանապարհին աղվեսներ շատ տեսանք, նա-  
պաստակներ ել շատ կային:

—Ինչ դժվար է յեղել ձեր ճանապարհը, ասաց Սուրենը, ի՞նչպես եք գնացել:

—Գնացինք, վորովհետև խորհրդային իշխանությունը մեր առաջ խնդիր էր դրել, պարտավոր էինք կատարել: Պետք է հաղթահարենք դժվարությունները, փորձենք մեր ուժերը: Այդ խնդիրը անձնական չէր, այլ հասարակական: Ուրեմն անպայման պետք էր կատարել:

Մենք ոգնության յեկանք հեռավոր շրջաններին, նրանց կապը Յերևանի հետ վերականգնելու:

Մենք կարմիր բանակայիններ ենք, սահմանապահներ, ֆիզկուլտուրիկներ: Մեր յերկրի անտեսության պլանների անթերի կատարման պաշտպաններն ու մասնակիցներն ենք:

Մեր ընկերները սահմանումն են հսկում, մենք ել այնտեղ ենք լինում, բայց յերբ հարկ է լինում՝ գալիս ենք այստեղ՝ ոգնության.—վերջացրեց խոսքը ընկեր Բաստուր:

Յերեխաները յերկար նայում էին Բաստուրի յերիտասարդ, խելացի, վճռական դեմքին և նրա անցած ճանապարհին:

Նրանցից յուրաքանչյուրը մտածում էր. յերբ մեծանա՝ ինքն ել Բաստուրի նման հերոսություններ կանի:



ԳՐԵԾ 75 Կ.

223

8136



СЕРИК  
ЧЕРЕЗ АГМАГАН  
ГІЗ ССРАРМЕНИИ ӘРІДАНЬ 1936

Պետրոսը № 3318 Գլավկիտի Բալոր № 277  
Տիրաւ 5000  
Տպարան Պետրոսի տպար. № 534